«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

ՄԱՍՆԱԿԻՑ Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 148 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԵՄԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅՈՒՄ «ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ» ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ:

ԵՐԵՎԱՆ, 2022թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՄՊԵՆՏԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ և ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿՈՄՊԵՆՏԱՑԻԱՆՆԵՐԸ: 3

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԼԱԲՈՐԱՏՈՐ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ: 10

Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը 11

ԼԱԲՈՐԱՏՈՐ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ՝ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ 13

Ըստ կազմակերպման ձևի 13

Ըստ առաջադրանքի ծավալի և բնույթի 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաանչյուր ուսուցիչ իր դասի սցենարիստն է, բեմադրողը և դերասանը: Այս երեք անձնավորությունները շատ կարևոր են, որպեսզի հանդիսատեսին, մեր պարագայում աշա-կերտին, հասնի այն ամենը, ինչ գրված էր սցենարում, դասագրքում: Ինչպես մտածում էր ներկայացնել բեմադրողը՝ այսինքէ ուսուցչը, երևակայական դասի պլանավորումը գրելիս և ինչպես հմտորեն խաղաց իր դերը դերասանը՝ մեր պարագայում ուսուցիչը, դասը անցկացներիս: Ինչպես դերասանը ստանում է վարպետության դասեր, այնպես էլ ուսուցիչը տիրապետելով տարբեր մեթոդներին պետք է կարողանա ճիշտ խաղալ իր դերը՝ դարձնելով ուսուցման գործընթացը հաճելի և ցանկալի զբաղմունք իր աշակերտների համար:

Ուսուցման գործընթացում կարևոր դեր է հատկացվում լաբորատոր և գործնական աշխատանքներին, նրանց ճիշտ կազմակերպմանը և անցկացմանը, քանզի ինքնուրույն կատարած աշխատանքը հիմնավոր արմատավորում է ստացած գիտելիքները :

Հանրակրթության պետական նոր չափորոշիչը , կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից է սահմանում շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ `ակնկալվող վերջնարդյունքները : Գործնական աշխատանքների անցկաց-ման համար անրաժեշտ է ոչ միայն սարքեր և սարքավորումներ, այլ նաև կոմպետենտ մանկավարժներ՝ գործընթացը պատշաճ մակարդակի անցկացնելու համար:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը և առանցքային կոմպետացիաները:

Կոմպետենտություն (կարողունակություն) հասկացությունն ունի լատինական ծագում, competo նշանակում է հասնում եմ, ձգտում եմ, համապատասխանում եմ: Ս.Ի. Օժեգովի բառարանում կոմպետենտը մեկնաբանվում է որպես «որևէ ոլորտում գիտակ, բանիմաց, տեղեկացված, իսկ կոմպետենցիան՝ հարցերի ամբողջություն, որոնցում ինչ-որ մեկը լավ տեղեկացված է»:

Այսպիսով՝ ուսուցչի կոմպետենտությունը, մասնագիտական-մանկավարժական գործունեության տեսանկյունից մեկնաբանվում է որպես տեսական գիտելքները, գործնական կարողությունները և մասնագիտական որակները միավորող մի ամբողջական երևույթ, մասնագիտական կարողունակություն:

Սակայն պետք է նշել, որ կան հետազոտողներ, որոնք կոմպետենտությունը չեն կապում որոշակի գիտելիքների և կարողությունների հետ, քանի որ գիտելիքները, կարողությունները ժամանակի ընթացքում՝ մշակույթի, գիտության զարգացմանը, հասարակական գիտակցության փոփոխությանը զուգընթաց հնանում են, կորցնում են իրենց արդիականությունը: Կոմպետենտությունը ներկայանում է որպես մանկավարժական գործունեության ընթացքում ցուցաբերած մասնագիտական և անձնային բաղադրիչների ամբողջություն՝ անձնային որակների գերակայությամբ: Անձնային որակների շարքում նշվում են՝

- ինքնուրույնությունը
- հաղորդակցվելու ունակությունը
- ճշտապահությունը
- ինքնազարգացման ձգտումը,
- որոշակի աշխատանքային պայմաններում հարմարվելու կարողությունը:

Հաճա՞խ ենք, արդյոք, մանկավարժները իրենց հարց տալիս, թե «ինչպիսին եմ ես՝ որպես ուսուցիչ», «ինչու եմ ես այսպիսի արդյունքներ ստանում և ոչ թե այլ», «ինչպես են ինձ վերաբերում և ընդունում աշակերտներս», «ինչում եմ ես հաջողությունների հասել, և որ ոլորտներում դեռ անելիք ունեմ»:

Այս հարցերը ժամանակ առ ժամանակ պետք է իրեն տա ցանկացած մանկավարժ: Այն տանում է նրան դեպի ինքնավերլուծություն և ինքնաքննադատություն, սեփական սխալների ընդունման և արժեհամակարգի վերանայման և փոփոխման: Միայն նման մտածող, կասկածող, սեփական գործունեությունը վերլուծող մանկավարժն է դառնում իր գործի իսկական մասնագետ:

Մասնագիտական մանկավարժական կոմպետենցիաները առանձնացվում են ըստ հետևյալ խմբերի.



Իմացական-ճանաչողական՝

- կարողանալ օգտվել ուսումնամեթոդական և գիտական տեղեկատվությունից, ունենալ տեխնոլոգիական գրագիտություն, քննադատաբար վերաբերվել տեղեկատվությանը, համակարգել և նպատակային կիրառել այն ըստ նպատակների, տիրապետել նյութը տրամաբանված, մատչելի, հուզական-պատկերավոր, պրոբլեմահարույց շարադրելու կարողությունների,
- ուսումնասիրել ծրագրային և ուսումնամեթոդական նյութերը, առարկայական չափորոշիչները, գիտակցել տվյալ ուսումնական առարկայի, բաժնի, թեմայի նպատակները, յուրացվող գիտելիքների, ձևավորվող կարողությունների ու հմտությունների համախումբը, տիրապետել մանկավարժական տեխնոլոգիաների և կարողանալ դրանք համարժեք կիրառել կոնկրետ պայմաններում,
- տիրապետել սովորողների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկություններին, ըստ տարիքային կենսափուլերի կրթական գործընթացի յուրահատկություններին,

- գիտակցել գործունեության ուժեղ և թույլ կողմերը, իրականացնել ռեֆլեքսիա, վերլուծել և անաչառ գնահատել իր վարած դասերը, հիմնավորել արժանիքներն ու թերությունները, մեկնաբանել կիրառված մեթոդների ու ձևերի ընտրությունը, գնահատել կիրառված մանկավարժական ներգործության արդյունավետությունը, հաղորդակցման ոճը,
- տիրապետել աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների վերահսկողության ու գնահատման մեթոդներին ու ձևերին, գնահատման չափանիշներին և խոսքային բնութագրման կարողություններին,
- յուրացնել 'ուսուցիչ-դպրոց', 'ուսուցիչ-դասարան', 'ուսուցիչ-աշակերտ- ծնող', 'ուսուցիչ-մանկավարժական կոլեկտիվ' համագործակցության ձևերը:

Առարկայական-մեթոդական՝

- նախագծել ու պլանավորել ուսումնական պարապմունքը, գրել դասի համառոտ և ծավալուն պլան-կոնսպեկտ,
- սահմանել ուսումնական խնդիրներն ու նպատակները, որոշել ուսումնասիրվող նյութի տեղն ու նշանակությունն ուսումնական դասընթացում, ինտեգրվող առարկաների կիրառման հնարավորությունները, որոշել և հիմնավորել ուսուցման կազմակերպման ձևի, ըստ ուսումնական թեմայի կիրառվող մեթոդների, միջոցների, հնարների, դիտազննական պարագաների, ուսուցման տեխնիկական միջոցների ընտրության նպատակահարմարությունը,
- ապահովել դասի առանձին փուլերի միջև հաջորդականությունն ու դասի տրամաբանական ամբողջականությունը, տնօրինել ուսումնական ժամանակահատվածը, տիրապետել անհատական, զույգերով, խմբային աշխատանքի կազմակերպման հմտություններին, կարողանալ սովորողներին ներգրավել դասարանային և արտադասարանային ուսումնաճանաչողական ինքնուրույն գործունեության մեջ:

Կազմակերպական՝

- տիրապետել ինքնակազմակերպման, ինքնակառավարման կարողությունների, սովորողներին ներկայացնել կարգապահական բնույթի պահանջներ,

- վերահսկել հանձնարարված աշխատանքի կատարման ընթացքը, հետևողական լինել, կարողանալ ապահովել սովորողների ուշադրությունը, այն խթանել հարցերի, լրացուցիչ առաջադրանքների, ուղղումների, տեղին դիտողությունների միջոցով, ընտրել մանկավարժական ներգործության համարժեք ձևեր՝ խրախուսանք, պատիժ, գնահատում, նկատողություն և այլն,
- կողմնորոշվել ըստ իրավիճակի, ճկուն, արագ գնահատել բախումնային, անկանխատեսելի իրավիճակները, ընդունել ճիշտ որոշումներ, կազմակերպել սովորողների արտաուսումնական գործունեությունը, համագործակցել ծնողների հետ և ըստ անհրաժեշտության հոգեբանամանկավարժական աջակցություն ցուցաբերել,
- սովորողներին ներգրավել բանավեճի, դերախաղերի մեջ, կարողանալ բաշխել նրանց պարտականությունները:

Հաղորդակցական՝

- տիրապետել հաղորդակցման միջոցների, գործառույթների ու ոճերի վերաբերյալ գիտելիքների, փոխներգործության, փոխգործակցության հնարների, աշակերտական կոլեկտիվում ձևավորել բարենպաստ փոխհարաբերություններ,
- ունե¬նալ մանկավարժական տակտ, վերահսկել իր ֆիզիկական և հոգեկան վիճակը, կառավարել սեփական հուզազգայական և կամային ոլորտը, տրամադրությունը, սոցիալ-պերցեպտիվ կարողությունները՝ ուշադրությունը, դիտողականությունը,
- համարժեք արձագանքել սովորողների վարքային դրսևորումներին, կողմնորոշվել ման¬կավարժական իրավիճակներում և համարժեք գնահատել, աշակերտներին աջակցել անձնական խնդիրների, բախումների լուծման գործում, փոխըմբռնման մթնոլորտ ստեղծել,
- կանխատեսել մանկավարժական իրավիճակները, տիրապետել խոսքային և ոչխոսքային կարողությունների, ստեղծել հետադարձ կապ,
- յուրացնել խոսքի տեխնիկայի հմտություններ (շնչառություն, ձայն, առոգանություն, ձայնի հնչերանգ, խոսքի տեմպ, ռիթմ և այլն), հաղթահարել անվստահությունը, վախը, լարվածությունը, կաշկանդվածությունը:

Կրթությունը ներառում է մարդու՝ որպես սոցիալական էակի կայացման ամբողջ գործընթացը: Կրթությունը ուսուցանվող առարկաների վերաբերյալ ավարտուն

պատկերացումների, գիտելիքների և դրանց գործնականում կիրառման կարողությունների, հմտությունների ձևավորման գործընթացն է:Այսինքն՝ կրթությունը գիտելիքների, կարողությունների ու մտածողության միջոցների այն ծավալն է, որին տիրապետում է սովորողը:

Ուսուցումը բնութագրվում է որպես գործընթաց և արդյունք:

Ուսուցումը հստակ կազմակերպվող, նպատակադրվող և կառավարվող փոխգործակցության գործընթաց է , որը նպատակաուղղված է սովորողների որոշակի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, մտավոր ուժերի և հնարավորությունների, աշխարհայացքի, սոցիալական փորձի, անձնային որակների ձևավորմանը: Երկրորդ դեպքում ուսուցումը սահմանվում է որպես ուսումնական փոխգործակցություն: Այսպիսով՝ ուսուցումը սահմանվում է մանկավարժական աջակցության, առաջնորդության, համաստեղծագործության, փոխգործակցության, միասնական գործընթաց:

Ուսուցման հիմքը և յուրացման արդյունքը կազմում են գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Գիտելիքները մարդու կողմից բնական և հասարակական երևույթների, օբյեկտիվ իրականության արտացոլումն են գիտության փաստերի, պատկերացումների, հասկացությունների և օրենքների ձևով: Դրանք արտահայտում են հասարակական-պատմական պրակտիկայի ընթացքում մարդկության կողմից ընդհանրացված կոլեկտիվ փորձը, պրակտիկայում ստուգված օբյեկտիվ իրականության ճանաչողության արդյունքը:

Կարողությունները յուրացված գիտելիքների հիման վրա գիտակցաբար և ինքնուրույնաբար գործնական և տեսական գործողությունների հաջողությամբ կատարել կարողանալն ու պատրաստակամությունն է:

Հմտությունները պրակտիկ գործունեության բաղադրիչներն են, որոնք բազմակի կրկնությունների ճանապարհով ապահովում են գործողության արդյունավետ կատարումը:

Ուսուցման ընթացքում իրականացվում է սովորողների իմացական և ճանաչողական գործունեության կառավարում: Ուսուցումը ամբողջովին պայմանավորված է ուսման դրդապատճառներով՝ աշակերտի գործողություններով: Ուստի այդ գործընթացը երկկողմանի բնույթ է կրում ուսուցանողը սովորեցնում է, իսկ ուսուցանվողը՝ սովորում: Չնայած այդ գործընթացների միասնությանը և փոխադարձ կապին, յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները:

Ուսուցիչն ուսուցանվողի համար ստեղծում է պայմաններ ճանաչողական գործունեության իրականացման նպատակով, կարգավորում այդ գործընթացը , վերահսկում արդյունքները, իսկ սովորողը յուրացնում է իր համար նոր փորձը՝ ձևավորում նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, հստակ պատկերացնելով իր պատճառաբանված գործունեության նպատակը:
Ուսուցումը « ձևավորելով հասարակական փորձը» համարվում է մարդու սոցիալականացման անհրաժեշտ պայման « նպաստում նրա՝ որպես լիարժեք մարդու կրթությանը» զարգացնում նրա անհատականությունը:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների եև դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են:
Սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի եւ չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձեւավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական եւ մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձեւավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձեւավորում են համակարգային եւ ինտեգրված մտածողություն.
Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն. սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման: Նրանք ձեւավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ եւ հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները,կարողանում են դրսեւորել առողջ եւ անվտանգ կենսակերպ, ինչպես նաեւ մասնագիտական կողմնորոշում:
Թվային և մեդիա կարողունակություն. սովորողները տիրապետում ե մեդիագրագիտու-թյան կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը եւ դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են

կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել եւ տարածել տեղեկություններ, քննադատորեն
վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական եւ այլոց արժեքային պատկերացումների,դիրքորոշումների եւ գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաեւ դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու եւ վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝
անվտանգության, պատասխանատվության եւ էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական եւ ստեղծագործական հմտություններին, ինչպես նաեւ կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով.

Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն. սովորողներն առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի եւ աշխատանքային ոլորտի երեւույթները ճանաչելու եւ դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձեւերի, մոդելների, կորերի, աղյուսակների միջոցով հասկանալու համար: Աշակերտները կարողանում են ընկալել եւ արդյունավետ կիրառել վերացարկված եւ ընդհանրացված հասկացությունները եւ ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները: Նրանք ընկալում են բնագիտական մտածողության եւ աշխատանքի, ինչպես նաեւ տեխնիկական առաջընթացի միջեւ եղած փոխադարձ կապը:

Տնտեսական կարողունակություն. աշակերտները համարժեք վերլուծում եւ գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության եւ համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները եւ պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաեւ այդ գործընթացներում ճանաչում:

Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը լաբորատոր և գործնական աշխատանքների ընթացքում:

Ավագ
դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն

ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը , դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

ՈՒսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարն եր, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք:Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխ ատել,բայց դա դեռ ինքնուրույն աշխատանք չէ:

Նախ տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում ինքնուրույնություն և ինքնուրույն աշխատանք ար տահայտությունները: Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտա հայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքո ւմ են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողակ ան կարողություններն ու հմտությունները:

Միջին դասարաններում դասերի ընթացքում գերակշռում է ուսուցման ճակատային ¦ֆրոնտա լ§ ձևը, երբ աշակերտների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջակ ան հրահանգներից: Այդ գործողությունները հիմնականում կատարվում են գրատախտակի մոտ: Այսպիսի գործողությունները արգելակում են երեխաների զարգացումը, և արդեն

ավագ դասարանում սովորողները հայտնվում են անօգնական վիճակում՝ գրքի շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքների ինքնուրույն լուծման, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման ընթացքում: Առաջադրանքների ծավալը նրա ուժերից վեր է դառնում, աշխատանքի տեմպը՝ դանդաղ:

Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում ինքն իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները,
դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:

Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

Փորձը ցույց է տալիս, որ՝

- Ճիշտ կազմակերպված լաբորատոր աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում:
- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ լաբորատոր ին աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- Լաբորատոր աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը,

իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի լաբորատոր աշխատանքը ուսուցման գործընթացում: Այն դառնում է հիմք սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման համար: Արդյունքում, Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողները կարողանում են ինքնուրույն կատարել գործնական աշխատանքը:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի ռ±ր փուլում է նպատակահարմար կազմակերպել գործնական աշխատանքը,
- գործնական աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Գործնական աշխատանքը կատարելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված, աստիճանաբար բարդացող լաբորատոր աշխատանքների միջոցով: Մինչ գործնական աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող լաբորատոր աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում նաև աշակերտին:

Լաբորատոր և գործնական աշխատանքի դասակարգման հատկանիշներ՝ ըստ ուսումնական նպատակների

1. Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող
2. Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող
3. Գիտելիքները համակարգող
4. Որոշակի կարողություններ զարգացնող
5. Ստուգող, վերահսկող

Ըստ կազմակերպման ձևի

1.Ընդհանուր՝ երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը

2. Խմբային, երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա,

3. Անհատական, երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:

Ըստ ռաջադրանքի ծավալի և բնույթի

Իսկ ի՞նչ ծավալով և ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար:Այսպես.

1. Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը:

2. Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքերի բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարդացնել:

3. Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

4. Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտեիլքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես

պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

5. Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին:Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ,օրինակ՝Excel-ում իրագործել հաշվարկներ , ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ:Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:

Սակայն պետք է նշել ,որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները:Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է է դնում.Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

6. Գործնական աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:

7. Գործնական աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում:Միայն այդ դեպքում գործնական աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

8. Ցանկալի, որ գործնական աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

9. Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում» , պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

10. Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:

11. Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:

Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ: Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով:

Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար:Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

Եզրակացություն

Աշակերտների ինքնուրույն գործունեության գագաթնակետն է հանդիսանում ստեղծագործական հետազոտական աշխատանքը, որի հիմքում ենկած են աշակերտի
ուսուցման ենթացքում ստացած գիտելեքները և գործնական աշխատանքների ժամանակ ձեռք բերած կարողունակություններն ու հմտությունների կիրառումը: Այդ աշխատանքները ամրապնդում են գիտեիքների ինքնուրույն որոնման և խմբա-գրման
հմտությունները: Դրանք ստեղծագործող անձի ձևավորման արդյունավետ մի-ջոցներից են: Ստեղծագործական բնույթի ինքնուրույն աշխատանքները հնարավո ր ու-
թյուն են ընձեռնում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գի տե-լիքներ:

Գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.
2. Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխչյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2011թ.
3. Լ. Գասպարյան Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը և առանցքային կոմպետենցիաները: